Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

3394

4477

# ՀԱՒԷՔՈՒՄՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՊԱՐՏՈՒՑ ՍՐԲՈՑ
ԽՈՐՀՐԴՈՑ, ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑ
ԵԿԵՂԵՑԻՈՅ։

ԱՀԽԱՏԱՍՏԻՐՈՒԹԵԱՄԲ
ՏԷՐ ՍԵՂԲԵՍՏՐՈՍ ՔԱՀԱՆԱՅԻ
ՅՈՎՀԱՆՆՍԵԱՆ ՆՈՐ
ՔՈՒՂԱՅԵՑԻՈՅ

33394

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ
ՍՐԲՈՑ ՎԱՆԱՑ

Ի ՆՈՐ ՔՈՒՂԸ
1880

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ
# ԳԼԷՈՐԳԻՈՅ Դ·
ԱԶԳԱՍԷՐ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

ՀՐԱՄԱՆԱՒ
## Տ· ԳՐԻԳՈՐԻՍ
ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՍՐԲՈՅ
ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ
ՎԱՆԱՅ

Ղորին Բարձր Սրբազնութեան Տեառն
ԳՐԻԳՈՐԻՍԻ Արքեպիսկոպոսի և
Առաքելաշաւիղ Առաջնորդի սրբոյ
Ամենափրկչեան Վանաց ·

Խոնարհ յայտարարութիւն

Ուրժանապատիւ Տէր Սեղբէոստրոս Յովհաննիսեան այժմ վիճակաւոր Քահանայն Ռթաւիոյ, 'ի 20 Դիզէմբր 1879 գրութեամբ իւրով առաքեալ էր անտի առ մեզ զերկասիրութիւն իմն, "Հաւաքումն Քրիստոնէական պարտուց սրբոց Խորհրդոց և պատուիրանաց եկեղեցւոյ, կոչեցեալ, զի զկնի թողլոյ մեր քննութեան Սրբազնութեան Ձերում ապա թէ հրամայեսջիք, 'ի տիպ արձանացուցանել զայն 'ի քանի մի հարիւր օրինակս, ուստի ըստ այմ առաքելով զվերոյիշեալն 'ի վերահասութիւն Ձեր, խնդրեմք հաճիլ՝ եթէ արժանի տպագրութեան ինչ իցէ, հրամայել

մեզ գրաւոր բանիւ, 'ի յանդ ածել զբարենպատակ առաջարկութիւն նորին, առ որ մեծաւ գոհութեամբ պատիւ անձանց համարիմք։

'ի Ջուղա 1880
'ի 22 փետրվար

Մնալ
Բարձր Սրբազնութեան Ձերում
Որպէս միշտ խոնարհ ծառայք.

Տէր Դաւիթ Ս. Նահապետեան
Տէր Մեսրոպը Կ. Դաւթեանց
Աւետիք Կ. Մ. Զօհրապեանց
Մ. Կ. Մ. Զօրաբեանց
Յակոբը Հ. Յակոբջանեանց

Հոգաբարձուք Տպարանի Ամենափրկչեան
Սուրբ Վանաց։

Բարեջան Հոգաբարձութեան Տպարանի Ամենափրկչեան սրբոյ Վանաց։

Աստ 'ի Ջուղա.

Ձերկասիրութիւն Բարեշնորհ Տէր Սեղբեոտրոս Վեհակաւոր Քահանային Բթաւիոյ, զառձայնեալն "Հաւաքումն Քրիստոնէական պարտուց, սրբոց խորհրդոց և պատուիրանաց Եկեղեցւոյ", ընթերցեալ՝ գովեցաք զՔանս Հեղինակին, հետևաբար 'ի կողմանէ Նիւթոյն շատ հարկաւորս դատեալ ընթերցման սիրելի Հօտիս, այսու գրութեամբս հրամայեմք Հոգաբարձութեանդ սկսանել անմիջապէս 'ի տպագրել։

Ողջ լերուք 'ի Տէր՝

ԳՐԻԳՈՐԻՍ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՀԱՅՈՑ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ
ԵՒ ՀՆԴԿԱ ՍՏԱՆԻ

'ի 25. փետրուար 1880
'ի Վանս Ամենափրկչեան
'ի Ջուղա, Համար 'յ 30.

# ՀԵՐԵՎՈՒՄՆ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՊԱՐՏՈՒՑ, ԾՐԲՈՑ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՏՈՒԻՐԱՆԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ցախ՝ 'ի լուսոյ բանին ուսանիմք պահպանել զառողջութիւն հոգւոյ և մարմնոյ, և աշխատութեամբ գտանել զպիտոյս կենաց։ Յոյր սակս պարտաւորիմք ստանալ զհրահանգս հոգեկան և մարմնական, առ 'ի պատրաստել զանձինս մեր՝ պիտանի անդամ ընկերութեան մարդկան և հաւատարիմ ծառայ Աստուծոյ։ Որպէս և. ուսուցանեն մեզ Սուրբ գիրք. (Ծննդ. դ. 19.) "Քրտամբք երեսաց քոց կերիցես ըզհաց քո"։ Իսկ վասն կրթութեան ասէ առաքեալն Պօղոս. (Ա. Տիմ. դ. 7. 8.) "Բայց կրթեա՛ զանձն քո յաստուածպաշտութիւն։ Զի մարմնոյ կրթութիւն առ սակաւ ինչ օգտակար է, իսկ աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է. և զաւետիս կենաց ունի զարգիս և զհանդերձելոցն"։

Երկրորդ՝ պարտաւորութիւն մեր առ ընկերն է կարեկցել նմա յամենայն դէպս, և սիրել զնա հաւասար անձին մերոյ, ըստ այնմ. «Սիրեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո»։ (Մատթ. իբ. 38.)։ Եւ դարձեալ. «Զամենայն զոր միանգամ կամիջիք՝ թէ արասցին ձեզ մարդիկ՝ այնպէս և դուք արարէք նոցա. զի այս իսկ են օրէնքն և մարգարէք»։ (Մատթ. է. 12)։ Ահա՛ 'ի տրիտուր ընկերսիրութեան՝ խոստանայ փրկիչն մեր Քրիստոս զարքայութիւնն երկնից տալ յաւուրն դատաստանի՝ յասելն, (Մատթ. իե. 34 – 36. 40.) «Եկա՛յք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէ՛ք զպատրաստեալ ձեզ արքայութիւնն 'ի սկզբանէ աշխարհի։ Զի քաղցեայ՝ և ետուք ինձ ուտել. ծարաւեցի՝ և արբուցէք ինձ. օտար էի՝ և ժողովեցէք զիս։ Մերկ՝ և զգեցուցէ՛ք զիս. հիւանդ էի՝ և տեսէք զիս. 'ի բանտի էի՝ և եկի՛ք առիս։ . . . Որովհետև արարէք միում յեղբարցս այսոցիկ փոքրկանց՝ ինձ արարէք»։

Երրորդ՝ պարտաւորութիւն մեր առ Աստուած է ըստ ամենայնի սիրել զնա իբրև աղբիւր անհուն բարութեան և պատճառ արարչութեան մերոյ, ըստ այնմ. «Մեք սիրեսցո՛ւք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ»։ (Ա. Յովհ. դ. 19)։ Եւ դարձեալ. «Զի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ»։ (Յովհ. դ. 16)։ Նա և Տէրն մեր Քրիստոս յայս բովանդակէ զամենայն օրէնս և զմարգարէս. «Սիրեսցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ քումմէ, և յամենայն անձնէ քումմէ, և յամենայն մտաց քոց։ Այս է մեծն և առաջին պատուիրան։ Եւ երկրորդն՝ նման սմին. սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք և մարգարէք կախեալ կան»։ (Մատթ. իբ. 37 – 40)։ Իսկ աստուածսիրութիւնն պարտի լինել բարոյապէս, ըստ որում փրկիչն մեր վկայէ. (Յովհ. ժդ. 21.) «Որ ունի զպատուիրանս իմ՝ և պահէ զնոսա, նա՛ է որ սիրէ զիս»։ Եւ վասն ընկերասիրութեանն ասէ առաքեալն (Հռովմ. ժդ. 8 – 10)։ «Եւ մի՛ ումի՛ք պարտապան գտանիցիք, բաց զմիմեանս սիրելոյ։ Զի որ սիրէ զընկերն, զօրէնսն կատարէ։ Զմի՛ շնայցեսն, և մի՛ սպանանիցես, և մի՛ գողանայցես, և մի՛ սուտ վըկայիցես, և մի՛ ցանկանայցես. և եթէ այլ ինչ պատուիրանք՝ յայն բան բովանդակին, եթէ՝ սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Սէր՝ ընկերի իւրում չար ո՛չ առնէ. լրումն օրինաց սէրն»։ Սմին իրի հաճեցաւ Աստ դրոշմել զտասնաբանեայ պատգամս 'ի տախտակսն քարեղէնս, և տալ 'ի ձեռն Մովսիսի մարգարէին. յորոց առաջին զերիքին յայտ առնեն զպարտաւորու-

թիւնս հաւատացելոցն՝ նկատմամբ առ Աստուած և առ աստուածսիրութիւն, իսկ մնացեալ վեցերքին ցուցանեն զոր ինչ պարտէ տալնել՝ նկատմամբ առ անձն և առ ընկերասիրութի։

## ՏԱՍՆԱՐԱՆԵԱՅ ՊԱՏԳԱՄՔ

Ա. «Ես եմ Տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն Եգիպտացւոց 'ի տանէ ծառայութեան։ մի եղիցին քեզ այլ աստուածք բաց յինէն»։

Բ. «Մի արասցես դու քեզ կուռս ըստ ամենայն նմանութեան. որ ինչ յերկինս 'ի վերոյ, և որ ինչ յերկիր 'ի խոնարհ, և որ ինչ 'ի ջուրս 'ի ներքոյ երկրի։ մի երկիրպագանիցես նոցա, և մի պաշտեսցես զնոսա. զի ես եմ Տէր Աստուած քո՝ Աստուած նախանձոտ, որ հատուցանեմ զմեղս հարանց՝ որդւոց. յերիս և 'ի չորս ազգս ատելեաց իմոց։ Եւ առնեմ զողորմութիւն 'ի հազար ազգս սիրելեաց իմոց, և ոյք պահին զհրամանս իմ»։

Գ. «Մի առնուցուս զանուն տեառն Աստուծոյ քոյ 'ի վերայ սնոտեաց. զի ոչ սրբեսցէ Տէր զայն, որ առնուցու զանուն նորա 'ի վերայ սնոտեաց»։

Դ. «Յիշեսջիր զօրն շաբաթուց սրբել զնա. զվեց օր գործեսցես, և արասցես զամենայն գործս քո։ յաւուրն եօթներորդի շաբաթ Տեառն Աստուծոյ քում, մի գործեսցես 'ի նմա զամենայն գործս քո դու և ուստր քո և դուստրը քո, ծառայ քո, և աղախին քո, եզն քո և էշ քո, և ամենայն անասուն քո, և եկն քո և պանդուխտն քո որ 'ի քեզ։ Զի զվեց օր արար Տէր Աստուած զերկինս և զերկիր, և զծով և զամենայն որ 'ի նոսա, և հանգեաւ յաւուրն եօթներորդի, վասն այնորիկ օրհնեաց Տէր զօրն եօթներորդ, և սրբեաց զնա»։

Ե. «Պատուեա զհայր քո և զմայր քո, զի քեզ բարի լինիցի, և զի երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրին բարութեան՝ զոր Տէր Աստուած տացէ քեզ»։

Զ. «Մի սպանաներ»։

Է. «Մի շնար»։

Ը. «Մի գողանար»։

Թ. «Մի սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումմէ»։

Ժ. «Մի ցանկանար տան ընկերի քոյ, և մի անդոյ նորա։ մի ցանկանար կնոջ ընկերի քոյ, և մի ծառայի նորա, և մի աղախնոյ նորա, և մի եզին նորա և մի իշոյ նորա, և մի ամենայն անասնոյ նորա, և մի ամենայնի զինչ ընկերի քոյ ելցէ»։ (Ելք. Ի. 2 – 17)։

Ը. բարչապետն բնութեանց Աստուած արար զմարդն 'ի հողոյ, և զարդարեաց զնա բանական, ազատ և անմահ հոգւով, տըպաւորեալ 'ինմա զպատկեր և զգիտութիւն էութեան իւրոյ, շաղկապեաց զնա ընդ իւր 'ի ձեռն կրօնի, ըստ այնմ. "եւ արար Աստուած զմարդն 'ի պատկեր իւր" . (Ծնն. Ա. 27) : Եւ դարձեալ. "Որպէս ամենայն ինչ մեզ՝ իւրոյ աստուածեղէն զօրութեանն առ 'ի կեանս և աստուածպաշտութիւն շնորհեալ. 'ի ձեռն գիտութեան այնորիկ որ կոչեացն զմեզ յիւր 'ի փառսն և 'ի վայելչութիւն" . (Ը. պետ. Ա. 3) : վասն որոյ խորհուրդք քրիստոնէական կըրօնի ունին զխորհրդական հաղորդութիւն մարդոյ ընդ Աստուծոյ, որով նորոգի բարոյապէս սիրտ հաւատացելոյն, և կազդուրի գերբնական շնորհօք սպառազինեալ հաւատով, յուսով և սիրով, իբրև զինուոր Քրիստոսի՝ պատերազմի միշտ ընդդէմ հնարից սատանայի, պատրանաց աշխարհի, և ախտից մարմնոյ. մինչև արժանասցի ժառանգել զարքայութիւնն երկնից :

## ԽՈՐՀՈՒՐԴՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Ա. Մկրտութիւնն է խորհուրդ սահմանեալ 'ի Քրիստոսէ, 'ի մկրտին իւր 'ի Յովհաննէ. ըստ այնմ. "եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա



երկինք. և տեսաւ զհոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև զաղաւնի և գայր 'ի վերայ նորա. եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ" . (Մատթ. Գ. 16. 17) : Նիւթ խորհրդոյս է բնական ջուր, իսկ ձևն՝ է բանն տէրունական, որ ասէ. (Մատթ. ԻԸ. 19.) "գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ" : Պաշտօնեայ խորհրդոյս է եպիսկոպոս կամ քահանայ. և ընդունակ՝ ամենայն ոք եթէ տղայ և եթէ չափահաս. յոր պարաւանդ է Քրիստոս յասելն. (Յով. Գ. 5.) "եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ" : Պարտէ երիցս ընկղմել զերեխայն 'ի ջուր աւազանին, 'ինչպէս երեքօրեայ թաղմանն Քրիստոսի. և յաղստութիւն 'ի սկզբնական մեղաց. որպէս առաքեալն ասէ. (Հռովմ. Զ. 3. 4.) "Զի որ միանգամ մկրտեցաք 'ի Քրիստոս Յիսուս, 'ի մահ անդր նորա մկրտեցաք. թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն 'ի մահ" : Եւ դարձեալ. (Տիտ. Գ. 5.) "Ապրեցոյց զմեզ 'ի ձեռն աւազանին միւսանգամ ծննդեան և նորոգութեան Հոգւոյն սրբոյ" :

Բ. Որոշեալ է խորհուրդ սահմանեալ ընկղմի մկրտութեանն՝ իբրև կատարումն այնր խորհրդոյ : Որպէս 'ի մկրտութեան Յիսուսի ի-

Յորդանան՝ իջեալ Հոգին սուրբ 'ի վերայ նորա 'ի կերպարանս աղաւնւոյ օծ զնա Աստուած. ըստ այնմ "Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի 'ի ջրոյ անտի. և ահա բացան նմա երկինք. և տեսեալ զՀոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրև աղաւնի և գայր 'ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ,,. (Մատթ. գ. 16. 17)։ Եւ դարձեալ. "Հոգի Տեառն 'ի վերայ իմ, վասն որոյ և օծ իսկ զիս, (Եսա. կա. 1)։ Եւ դարձեալ. "Զոր օծն Աստուած Հոգւով սրբով և զօրութեամբ,,։ (Գործ. Ժ. 38)։ Նոյնպէս և 'ի մկրտութեան իւրաքանչիւր հաւատացելոց, իջեալ աներևութաբար Հոգին սուրբ 'ի վերայ աւազանին, կազդուրէ շնորհօք զհաւատս մկրտելոյն 'ի Յիսուս Քրիստոս, ըստ որում. "Ո՛չ ոք կարէ ասել՝ Տէր զՅիսուս, եթէ ոչ Հոգւովն սրբով,,. (ա. կորն. ժբ. 3)։ Սահմանեցաւ խորհուրդ Դրոշմին 'ի ձեռն Հոգւոյն սրբոյ 'ի նորոգութիւն ներքին մարդոյն և յաճումն Հշմարիտ հաւատոց։ Որպէս և առաքեալք Քրիստոսի ընկալան զօծումն շնորհաց Հոգւոյն սրբոյ 'ի վերնատանն. "Եւ լցան ամենեքեան Հոգւով սրբով, և սկսան խօսել յայլ լեզուս՝ որպէս և Հոգին տայր բարբառել նոցա,,. (Գործ. բ. 4)։ Եւ զնոյնն առաքեալք մատակարարէին Հաւատացելոց. ըստ այնմ.



"Յայնժամ եդին զձեռս 'ի վերայ նոցա և առնուին Հոգի սուրբ,,. (Գործ. ը. 17.)։ Նիւթ խորհրդոյս է իւղն օրհնեալ, իբրև զգալի նշան աներևոյթ շնորհաց Հոգւոյն սրբոյ, որով մատակարար խորհրդոյն կնքէ զճակատն, զաչսն, զականջսն, զհոտոտելիսն, զբերանն, զձեռսն, զսիրտն, զքամակն և զոտս մկրտելոյն. յայս միտ ասէ առաքեալն. (ա. Յովհ. բ. 20. 27.) "Եւ դուք օծութիւն ունիք առ 'ի սրբոյն։ ... օծութիւնն՝ զոր ընկալարուք 'ի նմանէ՝ բնակեսցէ 'ի ձեզ,,։ Եւ միւս առաքեալն ասէ. (բ. կոր. ա. 21.) "Այլ որ հաստատեացն զմեզ ձեօք հանդերձ 'ի Քրիստոս, և օծ զմեզ. Աստուած է,,։

Գ. Ապաշխարութիւնն է խորհուրդ սահմանեալ 'ի Քրիստոսէ, որով գտանէ մարդ զթողութիւն մեղաց և զնորոգութիւն կենաց, զոր և փրկիչն մեր քարոզեաց յասելն. (Մտթ. Է. 17,) "Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից,,։ Եւ դարձեալ. (Մրկ. ա. 15.) "Ապաշխարեցէք՝ և հաւատացէք յԱւետարանն,,։ Նութիւն խորհրդոյս է զղջումն, խոստովանութիւն և հատուցումն։ Զղջումն է ցաւօք սրտի խորշիլ յամենայն մեղաց, որպէս սովին պայմանաւ շնորհեաց Քրիստոս զթողութիւն մեղաց կնոջն Պոռնկի, յասելն. (Յովհ. ը. 11.) "Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ.

Երթ՝ յայսմ հետէ մի մեղանչեր ,, ։ Իսկ անզգեղջ մեղաւորաց սպառնայ . ( Ղկ . Ժդ . 3 . ) ,, Այլ եթէ ոչ ապաշխարիցէք՝ ամենեքին նոյնպէս կորնչիջիք ,, ։ Խոստովանութիւնն է օրէնսդրութիւն աստուածային, որով ամբաստանէ մեղաւորն զյանցանս իւր քահանային, առ 'ի կըտանել 'ինմանէ զարձակումն . վասն այսորիկ իմաստութիւնն Աստուծոյ հաճեցաւ տալ զթողութիւն մեղաց 'ի ձեռն Պաշտօնէից իւրոց՝ ասելով . ( Յովհ . Ի . 23 . ) ,, Եթէ ումեք թողուցուք զմեղս , թողեալ լիցի նոցա . եթէ զուրուք ունիցիք , կալեալ լիցի ,, ։ 'ի քարոզել Յովհաննու զապաշխարութիւն , ,, Յայնժամ ելանէին առ նա ամենայն Երուսաղէմացիք և ամենայն Հրէաստան , և ամենայն կողմն յորդանանու։ Եւ մկրտէին 'ինմանէ 'ի յորդանան գետ , և խոստովան լինէին զմեղս իւրեանց ,, . ( Մատթ . դ . 5 . 6 ) ։ Եւ 'ի քարոզել Պօղոսի յԵփեսոս . ,, Բազումք 'ի հաւատացեալոցն գային և խոստովան լինէին , և պատմէին զգործս իւրեանց ,, ։ ( Գործ . ԺԹ . 18 ) ։ Եւ դարձեալ յայս խորհուրդ ցուցանէ առաքեալն զփրկութիւն մեր՝ յասելն . ( Ա . Յովհ . Ա . 9 . ) ,, Ապա եթէ խոստովան լինիցիմք զմեղս մեր , հաւատարիմ է նա և արդար՝ առ 'ի թողուլ զմեղս մեր ,, ։ Իսկ յետ խոստովանութեանն՝ պարտի առնել զհատուցումն ապաշխարանաց 'ի ձեռն աղօթից , պահոց



և ողորմութեան , օրինադրեալ 'ի խոստովանահօրէն ըստ չափու և ըստ տեսակի մեղացն , որպէս և Աստուած մարգարէին ասէ . ( Յոել . Բ . 12 . ) ,, Դարձարուք առիս յամենայն սրտէ ձերումէ , պահովք՝ լալով՝ և կոծելով ,, ։ Եւ 'ի քարոզութեանն Յովհաննու՝ զղջացեալ Նինուէացւոց դարձան 'ի մեղաց իւրեանց , ,, Եւ հաւատացին արք Նինուէացիք յԱստուած , և քարոզեցին պահս՝ և քուրձ զգեցան 'ի մեծամեծաց մինչև ցփոքունս իւրեանց ,, ։ ( Յովն . դ . 5 ) ։ Այսպէս և յաղագս անհարին մեղացն Նաբուզոդոնոսայ՝ ապաշխարանս դնէր նմա մարգարէն , յասելն . ( Դան . Ղ . 24 ) ։ ,, Վասն այդորիկ արքայ , խրատ իմ հաճոյ թուեսցի քեզ . և զմեղս քո ողորմութեամբ քաւեսջեր , և զանօրէնութիւնս քո զթովք տնանկաց ,, ։ Եւ մաքսաւորն Զաքէոս զղջմամբ սրտի ասէ . ,, Տէր՝ ահա զկէս ընչից իմոց տամ աղքատաց , և եթէ զոք զրկեցի , հատուցից չորեքկին ։ Եւ ասէ ցնա Յիսուս . այսօր հղէ փրկութիւն տանս այսմիկ ,, . ( Ղուկ . ԺԹ . 8 . 9 ) ։ Իսկ միւս մաքսաւորն աղօթիւք ընկալաւ զթողութիւն մեղաց 'ի տաճարին , ըստ այնմ . ,, Եւ մաքսաւորն կայր մեկուսի , և ոչ կամէր՝ և ոչ զաչս ընդ երկինս ամբառնալ , այլ կոծէր զկուրծս իւր՝ և ասէր , Աստուած՝ քաւեա զիս զմեղաւորս , ( Ղուկ . ԺԸ . 13 ) ։

Դ . Հաղորդութիւնն է խորհուրդ տերու-

նական ընթրեաց, յորում Քրիստոնեայք ընդ տեսակօք սրբագործեալ հացի և գինւոյ՝ ճաշակն զՀշմարիտ մարմին և զարիւն Քրիստոսի 'ի Թողութիւն մեղաց, ըստ այնմ. "Եւ մինչդեռ ուտէին նոքա, առ Յիսուս Հաց՝ օրհնեաց և հրեկ, և ետ աշակերտացն՝ և ասէ. առէք կերայք՝ այս է մարմին իմ: Եւ առեալ բաժակ գոհացաւ՝ ետ նոցա և ասէ. արբէք 'ի դմանէ ամենեքին: Զի այդ է արիւն իմ Նորոյ ուխտի, որ 'ի վերայ բազմաց հեղանի 'ի Թողութիւն մեղաց,,. (Մատթ. իգ. 26-28): Որով և հաղորդիմք ընդ Քրիստոսի և ընդ միմեանս. "Որ ուտէ զմարմին իմ, և ըմպէ զարիւն իմ, յիս բնակեսցի, և ես 'ի նմա,,. (Յովհ. զ. 57): "Զի մի հաց, մի մարմին եմք բազումքս, զի ամենեքին 'ի միոջէ հացէ անտի վայելեմք,,. (Ա. Կորն. Ժ. 17): Եւ նովին հաղորդութեամբ մարմնոյ և արեան փրկչին մերոյ՝ ունիմք զյոյս փառաւոր յարութեան 'ի կատարածի աշխարհիս, ըստ խոստման Տեառն մերոյ, որ ասէ. (Յովհ. զ. 55.) "Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենական. և ես՝ յարուցից զնա յաւուրն յետնում,,: Սուրբ հաղորդութիւնն կոչի և Պատարագ Նորոյ ուխտիս, նոյն ինքն է Ճշմարիտ զոհ սահմանեալ 'ի Քրիստոսէ, որ մինչև պատարագեալ ի խաչին՝ բաշխեաց զմարմին և զարիւն իւր 'ի



Թողութիւն մեղաց, և զկնի մահուն իւրոյ հաճեցաւ Քրիստոս Թողուլ 'ի սուրբ եկեղեցւոջ իւրոյ՝ զոհ փրկարար 'ի նորոգել մշտնջենապէս զպատարագ խաչին իւրոյ, ընդ տեսակօք հացի և գինւոյ ճաշակել զմարմին և զարիւն իւր սուրբ, որպէս և պատուիրեաց. (Ղուկ. իգ. 19.) "Զայս արասջիք առ իմոյ յիշատակի,,: Եւ առաքեալն ասէ. (Ա. Կոր. Ժա. 26.) "Քանիցս անգամ թէ ուտիցէք զհացս զայս՝ և զբաժակս ըմպիցէք, զմահ Տեառն պատմեցէք. մինչև եկեսցէ նա,,: Որով և կացոյց զառաքեալս և զյաջորդս նոցա՝ քահանայս Նորոյ ուխտի. 'ի մատուցանել զնոյն Պատարագ վասն փրկութեան հաւատացելոց:

Գ. Ձեռնադրութիւնն է խորհուրդ սահմանեալ 'ի Քրիստոսէ, որով կարգէ զարժանաւոր պաշտօնեայս 'ի գործ սպասաւորութեան եկեղեցւոյ, 'ի հովուել զհօտ Տեառն՝ քարոզելով նոցա զբանն կենաց, և կատարելով զհոգևոր խորհուրդս 'ի պէտս և 'ի շինութիւն հաւատացելոց. զայս պաշտօն քահանայութեան ինքնին կարգեաց Քրիստոս ձեռնադրութեամբ և օրհնութեամբ. նախ՝ ընտրելով զառաքեալս ասէ. (Մատթ. իբ. 18. 19.) "Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յերկինս և յերկրի. որպէս առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զձեզ: Գնացէք այսուհետև՝ աշակերտեցէք զա-

սենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն Հօր՝ և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ ,, : Եւ ապա . ,, Եհան զնոսա մինչև 'ի Բեթանիա . և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա ,, . ( Ղուկ . իդ . 50 ) : Հետևաբար Պաշտօնեայ խորհրդոյս են Եպիսկոպոսք . իսկ ձևն՝ են աղօթք , պահք, ձեռնադրութիւն և օծումն միւռոնաւ . ըստ այնմ, ,, Մինչդեռ 'ի պաշտաման Տեառն կային՝ և պահէին, ասէ Հոգին սուրբ . որոշեցէ՛ք ինձ զԲառնաբաս և զՍաւղոս 'ի գործ՝ յոր կոչեցեալ է իմ զդոսա : Յայնժամ պահեալ և աղօթս արարեալ, եդին ձեռն 'ի վերայ նոցա՝ և արձակեցին ,, . ( Գործ . ԺԳ . 2 . 3 ) : Եւ դարձեալ . ,, Մի՛ անփոյթ առներ զշնորհացդ՝ որ 'ի քեզ են, որ տուաւ քեզ մարգարէութեամբ 'ի ձեռնադրութեան ,, . ( Ա . Տիմ . դ . 14 ) : Ի ձեռնադրութեան օծանէ Եպիսկոպոսն զՀաւկատ և զձեռս նորընծայ քահանային, և ասէ զաղօթս ( 'ի մեծ . Մաշտ . ) ,, Տէր Աստուածդ մեր՝ որ օծեր շնորհօք Հոգւոյդ սրբոյ և հոգևոր օրհնութեամբ սուրբ Մեռոնիս , զձեռս զայս . զամենայն զոր միանգամ սա օրհնէ , օրհնեա՛ , և զոր ինչ կնքէ յանուն քո , հաստատեա՛ և կատարեա՛ ,, : Իսկ կարգք բաժանին յեօթն աստիճանս , Ա . քահանայութիւն՝ որոյ լրումն է եպիսկոպոսութիւն , Բ . Սարկաւագութիւն . Գ . Եպիսարկաւագութիւն . Դ . Ջահընկալութիւն . Ե . Երգմնեցուցչութիւն . Զ . Ընթերցողութիւն . Է . Դռնապանութիւն :



Ա . Պատակ կամ ամուսնութիւնն է խորհուրդ եկեղեցւոյ , յորում վեսայն և հարսն փոխադարձ հաճութեամբ իրերաց , միաւորին 'ի մի մարմին 'ինչան հոգևոր միաւորութեան Քրիստոսի ընդ եկեղեցւոյ , որպէս առաքեալն վկայէ . ( Եփես . Ե . 28 – 31 . ) ,, Նոյնպէս պարտին արք սիրել զիւրեանց կանայս , իբրև զիւրեանց մարմինս , որ սիրէ զկին իւր , զանձն իւր սիրէ : Զի ոչ ոք երբէք ատեայ զանձն իւր , այլ սնուցանէ և դարմանէ՛ զնա , որպէս և Քրիստոս զեկեղեցի : Զի անդամք եմք մարմնոյ նորա , 'ի մարմնոյ նորա , և յոսկերաց նորա : Վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր , և երթիցէ զհետ կնոջ իւրոյ , և եղիցին երկոքին 'ի մարմին մի : Խորհուրդս այս՝ մեծ է , բայց ես ասեմ 'ի Քրիստոս , և յեկեղեցի ,, : Եւ կանանց պատուիրէ առաքեալն , ( Ա . Պետ . դ . 1 . ) ,, Նոյնպէս և կանայք հնազանդ լինել արանց իւրեանց ,, : Նիւթ խորհրդոյս է օրինաւոր խոստումն և հաւանութիւն առն և կնոջ Ը միմեանս , որով և անլուծանելի կապին նոքա մինչև ցմահ , զայս և հաստատէ Քրիստոս յասելն . ( Մատթ . ԺԹ . 4 — 6 . ) ,, Պատասխանի ետ նոցա և ասէ . չիցէ՞ ընթերցեալ ձեր թէ որ հաստատեացն իսկզբանէ՝ արու և էգ

արար զնոսա և ասէ։ «Վասն այսորիկ թողցէ այր՝ զհայր և զմայր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ, և եղիցին երկոքեան 'ի մարմին մի։ Ապա ուրեմն ոչ են երկու՝ այլ մի մարմին։ Արդ՝ զոր Աստուած զուգեաց, մարդ՝ մի մեկնեսցէ։» Եւ առաքեալն ասէ. (Ա. Կոր. Է. 10. 11.) «Այլ կանամբեացն պատուիրեմ, ոչ ես՝ այլ Տէր. կնոջ յառնէ մի մեկնել։ Ապա եթէ մեկնեսցի, անայր մնասցէ, կամ անդրէն ընդ առն իւրում հաշտեսցի. և առն՝ զկին իւր մի թողուլ»։ Իսկ պաշտօնեայ խորհրդոյս է քահանայն, որ սահմանադրեալ աղօթիւք եկեղեցւոյ կատարէ զսուրբ Պսակն. ևս ամուսնութիւն այրեաց թոյլատրի յօրինաց. ըստ այնմ. «Եկն կապեալ է ցորչափ ժամանակս կենդանի է այր նորա. ապա թէ ննջեցէ այր նորա, ազատ է ում կամիցի ամուսնանալ, բայց միայն տերամբ»։ (Ա. Կոր. Է. 39)։ Նպատակ ամուսնութեան է աճումն անդամոց հաւատացելոց 'ի լինելփառարանիչ Աստուծոյ. զոր օրհնեաց Աստուած ասելով, (Ծննդ. Ա. 28.) «Աճեցէք և բազմացարուք»։ Վասնորոյ պարտ են ծնողք հոգալ զհոգևոր և զմարմնաւոր պիտոյս զաւակացն իւրեանց, ըստ ամենայնի խնամել և մնուցանել զնոսա սիրով և երկիւղիւն Աստուծոյ. Նմանապէս պարտ են զաւակունք ըստ ամենայնի պատուել զծնողս իւրեանց, և հնազանդ կալ նոցա.



որպէս առաքեալն ասէ. (Եփես. Զ. 1 – 4.) «Որդիք՝ հնազանդ լերուք ծնողաց ձերոց՝ 'ի Տէր, զի այն է արժանն։ Պատուեա զհայր քո և զմայր, որ է առաջին պատուիրան յաւետեան։ Զի քեզ բարի եղիցի, և երկայնակեաց լինիցիս 'ի վերայ երկրի։ Հարք՝ մի զայրացուցանէք զորդիս ձեր, այլ սնուսջիք զնոսա խրատու և ուսմամբ Տեառն»։ Արգելք պսակի են, աղգակցութիւն, թերի հասակ, տկարութիւն, և աւուրք սրբութեան։ Աղգականութիւնն է կրկին, հոգևոր և մարմնաւոր, նախ՝ հոգևորն յառաջ գայ յորդեգրութենէ և 'ի մկրտութենէ, և սա՝ լուծանէ զպսակն որդեգրի կամ մկրտելոյն՝ ընդ հայրագրի և ընդ ընտանիս նորա, ընդ մկրտողի ևս կնքահօր և ընտանեաց նոցա. յորս չլինի խնամութիւն մինչև ցչորս ազգս։ Երկրորդ՝ մարմնաւորն յառաջ գայ յարենակցութենէ, որ ըստ Աստուածային օրինաց՝ լուծանէ զպսակն արենակցաց, (Տես 'ի գիրս Ղևտ. Ի.) Նա և ըստ բնական և եկեղեցական օրինաց՝ աղգակցութիւնն լուծանէ զպսակն մինչ ցչորրորդ ցեղն, և այն զի վնասակար է բնութեան և հակառակ բանի՝ յայտնել զառանս մերձաւորաց։ Թերի հասակ պատանւոյն է մինչև ցամս 14. և օրիորդին՝ մինչև ցամս 12, որոց չև հասեալ 'ի չափ հասակի, անվաւեր է ամուսնութիւն նոցա։ Տկարութիւն ամուսնացելոցն եթէ իցէ բնական

3394

և անբուժելի, մինչև չկարելնոցա կատարել զպարտս ամուսնական առ որդիս ծնութիւն, լուծանէ զպսակն։ Իսկ աւուրք սրբութեան են, 'ի բուն բարեկենդանէ մինչև ցվերջ ութօրէից Հոգեգալստեան. Ցօնք տէրունական. շաբաթապահք և կիւրակէք։ Յորս չլինի կատարել զպսակ։

Լ. Օծումն հիւանդաց՝ է խորհուրդ եկեղեցւոյ, որ կատարի մերթ ձեռն դնելով 'ի վերայ հիւանդաց, և մերթ օծմամբ և աղօթիւք, 'ի զօրացուցանել զհիւանդն մերձ 'ի մահ, և 'ի տալ աղօթիւք զթողութիւն ներելի մեղաց նորա. ըստ այնմ. «Ամենեքեան՝ որոց էին հիւանդք 'ի պէսպէս ցաւս, բերէին զնոսա առ նա, և նա՝ իւրաքանչիւր ումեք 'ի նոցանէ դնէր ձեռս, և բժշկէր զնոսա». (Ղկ. Դ. 41)։ Եւ դարձեալ. «օծանէին իւղով զբազում հիւանդս, և բժշկէին զնոսա». (Մրկ. Զ. 13)։ Եւ առաքեալն ասէ. (Յակ. Ե. 14. 15.) «Հիւանդանայցէ ոք 'ի ձէնջ, կոչեսցեն զերիցունս եկեղեցւոյն, և արասցեն 'ի վերայ նորա աղօթս, օծցեն իւղով յանուն Տեառն։ Եւ աղօթքն հաւատովք՝ փրկեսցէ զաշխատեալն, և յարուցցէ Տէր, և եթէ մեղս ինչ իցէ գործեալ՝ թողցին նմա»։ Արդ ըստ որում աղօթքն՝ որպէս մերձաւոր նիւթ խորհրդոյս, և օծումն՝ որպէս հեռաւոր նիւթ, իսկ 'ի կատա-



րել զայս խորհուրդ, պէտք են նախ՝ կատարեալ հաւատք և զղջումն 'ի հիւանդէ, վասնորոյ սուրբ եկեղեցին մեր 'ի վաղուց խափանեալ է զգործածութիւն իւղոյն, այլ միայն աղօթիւք պաշտէ զխորհուրդս ըստ առաքելական սովորութեանց։

Յետ բացատրելոյ զսուրբ պատգամն և զխորհուրդս աստուածային 'ի ձեռն վկայութեանց սուրբ գրոց, իբրև զպարտս բարոյական առաքինութեանց, նկատմամբ առ անձն, առ ընկերն և առ Աստուած. նա և հարկէ Քրիստոնէիս հպատակել միշտ կարգաւորութեանց և առաքելական սովորութեանց եկեղեցւոյն Քրիստոսի, որով մարթասցուք կատարել զընթացս աստուածպաշտութեան, 'ի փառս Աստուծոյ, և 'ի փրկութիւն անձանց մերոց։

## ԳԼԽԱՒՈՐ ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Առաջին՝ ստանալ ստէպ զսուրբ Հաղորդութիւն, գէթ միանգամ 'ի տարւոջն։

Երկրորդ՝ տալ զտասանորդս 'ի սրբութիւն Տեառն և 'ի պաշտօնեայս նորա։

Երրորդ՝ սուրբ պահել զկիւրակէն և ըստ օնս տէրունական՝ պաշտամամբ Տեառն։

Չորրորդ՝ պահել զպահս 'ի սահմանեալ աւուրս տարւոյն։

Ի. Օրէնքն Աստուածային և պատուիրան Եկեղեցւոյ հարկ 'ի վերայ դնեն հաւատացելոց առ հասարակ՝ եթէ չափահասից և եթէ մանկանց ընդունել զսուրբ Հաղորդութիւն մարմնոյ և արեանն Քրիստոսի, վասն որոյ նախ՝ պարտէ սրբել զխիղճ մտացն յամենայն չարէ, և կատարեալ զղջմամբ խոստովանել զմեղս. երկրորդ՝ մաքրել զմարմինն յամենայն մեռելոտի գործոց. և ծոմապահութեամբ աղօթելով նուիրել զանձն 'ի սէր և յերկիւղն Աստուծոյ 'ի սկիզբն և 'ի վերջ Հաղորդութեան. երրորդ՝ որչափ հնար է ստէպ փորձելով զանձն՝ արժանանալ ճաշակել զսուրբ Հաղորդութիւնն, ըստ որում յառաջնումն. "Եւ էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն, և հաղորդութեան և բեկանելոյ հացին և աղօթից" (Գործ. Բ. 42)։ Եւ կամ 'ի հինգ աւուրս նաւակատեաց Եկեղեցւոյ. իսկ պակասագոյնն զԷթ միանգամ 'ի տարւոջ 'ի Ցօնի Զատկին անխափան պարտէ ճաշակել զսուրբ հաղորդութիւնն, և և 'ի ծանր հիւանդութեան, և յերկար ճանապարհորդութեան։ Չորրորդ՝ գիտել պարտէ, զի թէ ոք առանց դառնալոյ 'ի մեղաց, այլ խորամանկութեամբ պահելով 'ի սրտի զխէթ և զխորհուրդս չարեաց, համարձակեսցի մերձենալ 'ի սուրբ Հաղորդութիւնն, յաւէտ դանձեսցէ անձին զդատապարտութիւն. վասն որոյ ասէ



առաքեալն. (Ա. Կոր. ԺԱ. 27 – 29.) "Որ ուտիցէ զհացս, կամ ըմպիցէ զբաժակս Տեառն անարժանութեամբ, պարտական եղիցի մարմնոյ և արեանն Տեառն։ Փորձեսցէ մարդ զանձն իւր, և ապա 'ի հացէ անտի կերիցէ, և 'ի բաժակէն արբցէ։ Զի որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ, դատաստանս անձին իւրում ուտէ և ըմպէ"։ Եւ արդ՝ որպէս ամենայն հաւատացեալք մի օրինակ ընդունակ են պատուիրանի Մկրտութեան, "Եթէ ոչ ոք ծնցի 'ի ջրոյ և 'ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ"։ (Յովհ. Գ. 5)։ Այսպէս և ամենեքեան ընդունակ են պատուիրանի Հաղորդութեան. "Եթէ ոչ կերիջիք զմարմին որդւոյ մարդոյ, և արբջիք զարիւն նորա, ոչ ունիք կեանս յանձինս։ Որ ուտէ զմարմին իմ՝ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յաւիտենականս"։ (Յով. Զ. 54. 55)։ Իսկ եթէ ոք հաւատացեալ անհոգութեամբ զանց արարեալ հրաժարեսցի 'ի սուրբ խորհրդոյս, և չկամիցի զԷթ առ տարին միանգամ խոստովանութեամբ ճաշակել զսրբարար Հաղորդութիւնն, դա ինքնին թողուցու զփրկութիւն իւր 'ի վտանգս, իսկ թէ ոմանք տկարանան իմանալ իսկ զզօրութիւն խորհրդոյն որ ընդ տեսակօք հացի և գինւոյ՝ փոխարկի յիսկական մարմին և յարիւն Քրիստոսի, վասն որոյ ողջամիտ վարդապետութեամբ բա-

ցատրէ զայն Ներսէս Լամբրոնացի, ('ի Մեկն. Պատ.) "Ասաց (Քրիստոս) բարձրաբարբառ 'ի ժողովուրդն՝ յուսուցանելն 'ի կափառնայում. "Որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ոչ ունի կեանս յանձինս,, : Զմարմին իմ ասաց, և ոչ զօրինակ մարմնոյն : Ցետ որոյ զբանիւ աստուածեալն՝ գործով կատարեաց : Զի" առ ասէ. հաց՝ գոհացաւ՝ օրհնեաց՝ սրբեաց՝ և ետ աշակերտացն, և ասէ. առէք կերէք 'ի սմանէ. այս է մարմին իմ,, . և ոչ օրինակ նորին : Նոյնպէս և զբաժակն՝ արիւն անուանեաց, և ոչ օրինակ արեան : Զոր Հաշակողքն աղաղակէին, "Արիւնն Յիսուսի սրբէ զմեզ յամենայն մեղաց,, : Եւ որ ուտէ և ըմպէ զնա անարժանութեամբ, ոչ թէ զօրինակն ոչ խորէ. այլ՝ զմարմինն Տեառն : Քանզի օրինակ է մարմնոյ զծագիր պատկեր : . . Արդ որպէս գծագրեալ պատկերն ոչ է կենդանի և ոչ կենդանացուցանել ունի զօրութիւն. այսպէս և սա՝ թէ օրինակ էր՝ ոչ ինքն կենդանի էր, և ոչ զայլս սրբէր,, :

Բ. Այն ինչ կամէր Աստուած կրթել ըզ-ժողովուրդն իւր զխրայէլ յաստուածպաշտութիւն, վանորոյ տապանորդել հրամայէ Մովսիսի զստացուածս նոցա 'ի շինութիւն խորանին վկայութեան և 'ի սրբութիւն Տեառն. որպէս ասէ. (Ելք. Լ. 5. 6.) "Առէք'ի ձէնջ հաս Տեառն. ամենայն ոք զիարդ և յոժարեսցի 'ի



սրտի իւրում, բերցէ պտուղ Տեառն : Ոսկի, արծաթ, պղինձ, և կապուտակ, և ծիրանի, և կարմիր կրկին մանեալ, և բեհեզ նիւթեալ,, : Եւ դարձեալ. "Ամենայն տասանորդ յերկրէ՝ 'ի սերմանեաց երկրին, և 'ի պտղոց ծառոց՝ Տեառն է 'ի սրբութիւն Տեառն,, . (Ղևտ. ԻԷ. 30) : Ըստ այսմ և իմաստունն ասէ (Առակ. Դ. 9.) "Պատուեա զՏէր 'ի քոց արդար վաստակոց, և հան նմա պտուղ 'ի քոց արդարութեան արմըտեաց,, : Իսկ իմաստութիւնն Աստուծոյ վՀռաբար ասէ. (Մրկ. ԺԲ. 17.) "Տուք զկայսեր՝ կայսեր, և զԱստուծոյ՝ Աստուծոյ,, : Եւ դարձեալ պատուիրէ Քրիստոս տալ զմանն տասանորդաց՝ պաշտօնէիցն Աստուծոյ՝ յասելն. (Դկ. Ժ. 7.) "Զի արժանի է մշակն վարձու իւրոյ,, : Զայս և մարգարէն ասէ. (Եզ. Կա. 6.) "Բայց դուք քահանայք Տեառն կոչեսջիք. պաշտօնեայք Աստուծոյ մերոյ անուանեսջիք, զզօրութիւն ազգաց կերիջիք, և մեծութեամբ օքանչելի լինիջիք,, : Նա և առաքեալն ասէ. (Եբր. Է. 4 – 6.) "Եւ որք յորդւոցն Ղևեայ զքահանայութիւնն առնուն, պատուէր ունին տասանորդել զժողովուրդն՝ ըստ օրինացն. այսինքն է՝ զեղբարս իւրեանց. թէպէտ և ելեալ իցեն յերանայն Աբրահամու,, : Իսկ վասն նորոյս քահանայութեանն ասէ առաքեալն. (Ա. Կոր. Թ. 11.) "Եթէ մեք 'ի ձեզ զհոգևորն սեր-

մանեցաք , մեծ ինչ է , եթէ 'ի ձէնջ զմարմնաւորդ Հն ձիցեմք " Եւ փարիսեցին ասէր . " Պահեմ երկիցս 'ի շաբաթու , և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց ,, . ( Ղուկ . ԺԸ . 12 ) :

Գ . Ի հնումն սահմանեալ էր Աստուած սրբել զօր շաբաթուն , իսկ 'ի նոր օրէնս սուրբ առաքեալք սրբելով զմիաշաբաթն կարգեցին մեզ կիւրակէ , յորում յարեաւ փրկիչն մեր 'ի գերեզմանէ . հաստատէ զայս միօրինակ աւանդութիւնն եկեղեցւոյ . սուրբ պահելով զօր միաշաբաթուն , յորում մատուցանելով զսուրբ Պատարագն 'ի փրկութիւն աշխարհի , և ընթեռնլով զսուրբ գիրս յունկնդրուն ժողովրդոց . հանդիսապէս կատարեմք զհոգևոր պաշտամունս 'ի փառս և 'ի գովեստ անուան Տեառն : Նա և սահմանեալ է սուրբ եկեղեցին զՏօնս Տէրունականս 'ի յիշատակ փրկարար Տնօրէնութեանն Քրիստոսի , և 'ի պատիւ սրբոյ Աստուածածնին . զորս և պատուիրէ պահել սրբութեամբ . և դարձեալ կարգեալ է զտօնս սրբոց վկայիցն Տեառն , առ 'ի տօնախմբել զյիշատակս նոցա , և բերել յանձին զտիպ և զօրինակ աստուածահաճոյ քաղաքաւորութեանն նոցա : Արդ՝ ըստ կարգաւորութեանն եկեղեցւոյ՝ պարտէ ամենայն հաւատացելոց կանխել յաղթս յառաւօտու և յերեկոյի , որպէս պատուիրէ Տէրն մեր , " Արթուն



կացէք և աղօթս արարէք , զի մի անկանիցիք 'ի փորձութիւն ,, . ( Մտթ . ԻԶ . 41 ) : Եւ դարձեալ , " Արթուն կացէք այսուհետև , յամենայն ժամ աղօթս արարէք ,, . ( Ղկ . ԻԸ . 36 ) : Իսկ զանձն իւր օրինակ տալով մեզ Քրիստոս , " Եւ հանէր զգիշերն 'ի գլուխ յաղօթսն Աստուծոյ ,, . ( Ղկ . Զ . 12 ) : Սուրբ առաքեալքն հետևելով օրինակին Քրիստոսի . ,, Էին հանապազորդեա միաբան յաղօթս ,, . ( Գործ . Ա . 14 ) : Եւ մանաւանդ յաւուրս կիւրակէի և տէրունական Տօնից՝ հարկ է մեզ ամենեցուն որպէս քրիստոնեայ՝ անխափան երթալ 'ի սուրբ եկեղեցին , որ է տուն Աստուծոյ և տուն աղօթից , ուր հոգւով և ճշմարտութեամբ նուիրել զաղօթս և զերկրպագուն Աստուծոյ . զի և անդ մանակից լիցուք շնորհացն սրբոյ Պատարագի մարմնոյ և արեան Տեառն , որով և ինքն Քրիստոս եղև միջնորդ և բարեխօս 'ի մէջ Աստուծոյ և մարդկան . ըստ որում , " Յաւուրս մարմնոյ իւրոյ՝ աղօթս և պաղատանս առ այն , որ կարող էր ապրեցուցանել զնա . ուժգին գոչմամբ և արտասուօք մատուցանէր , և լսելի լինէր առ լաւութեանն ,, . ( Եբր . Ե . 7 ) : Եւ Աստուածմարգարէին խօստանայ . ,, Եթէ դարձուցես զոտն քո չառնել զկամս քո յաւուրն սրբութեան , և կոչեսցես զշաբաթն փափուկս նուիրեալս Աստուծոյ , և փառաւորեալս , և ոչ փոխեսցես

զոսն քո 'ի գոբծ , և ոչ խօսեսցիս բան ինչ բարկութեան բերանով քով , և եղեցիս յուսացեալ 'ի Տէր ։ Եւ տարցի զքեզ 'ի բարութիւնս երկրին , և ջամբեսցէ քեզ զժառանգութիւն Յակովբայ հօր քոյ ,, ։ ( Ես ։ ԺԸ ։ 13 ։ 14 ) ։

Գ ։ Պատուիրան աւանդէ մեզ սուրբ եկեղեցին 'ի սահմանեալ աւուրս տարւոյն՝ այն է 'ի չորեքշաբաթու , յուրբաթու , յեօթնեկի և յաղուհացի պահել սրբութեամբ զպահս 'ի պարարտ կերակրոց , 'ի մոյ և յրմպելեաց , 'ի վճար ապաշխարանաց , և 'ի ճնշումն մարմնական հեշտութեանց ։ որ ցանկայ միշտ հակառակ հոգւոյ ։ Որպէս 'ի Հնումն բազումք առաքինացեալ 'ի ծոմապահութեան , և շատացեալ ընդ-ոլք արժանացան աղգի աղգի շնորհաց և գթութեանն Աստուծոյ ։ ընթեռնումք 'ի սուրբ գիրս , զի Մովսէս և Եղիա 'ի ձեռն պահոց արժանացան աստուածխօսութեան , ուր ասէ Մովսէս մարգարէն ( Բ ։ Օրին ։ Թ ։ 9 ։ ) " Յելանելն իմում 'ի լեառն առնուլ զտախտակսն քարեղէնս , զտախտակսն ուխտին զոր ուխտեաց Տէր ընդ ձեզ ։ Եւ եղէ 'ի լերինն զքառասուն տիւ և զքառասուն գիշեր , հաց ոչ կերայ և ջուր ոչ արբի ,, ։ Եւ դարձեալ , " Եւ հայեցաւ Եղիա , և ահա 'ի մնարեց նորա նկանակ հաճարոյ և կուժ ջրոյ ։ և յարեաւ եկեր և արբ ։ ։ ։ և գնաց զօրութեամբ կերակրոյն այնորիկ զքառասուն



տիւ և զքառասուն գիշեր , մինչև ցլեառն Աստուծոյ 'ի Քորեբ ։ Եւ հմուտ անդ յայրն և դադարեաց , և ահա բան Տեառն եղև առ նա և ասէ ։ զի ես դու աստ եղիա ։ ։ ։ Եւ ասէ ։ ելցես դու վաղիւ՝ և կացցես 'ի լերին անդ առաջի Տն , և ահա Տէր անցցէ , և հողմ մեծ ուժգին՝ որ զլերինս քակիցէ և զվէմս խորտակեցէ առաջի Տեառն , և ոչ 'ի հողմն Տէր , և յետ հողմոյն շարժումն , և ոչ 'ի շարժմանն Տէր ։ Եւ յետ շարժմանն հուր , և ոչ 'ի հուրն Տէր ։ և յետ հրոյն ձայն մեղմոյ օդոյ , և անդ Տէր ,, ։ ( Դ ։ Թագ ։ ԺԹ ։ 6 ։ 8 ։ 9 ։ 11 ։ 12 ։ ) ։ Եւ 'ի բառնալ զանիրաւուն տանն Իսրայէլի՝ պատուիրեաց Աստուած մարգարէին Եզեկեայ ընդոլք միոյն պահել ։ որպէս ասէ ։ ( Եզեկ ։ Դ ։ 9 — 11 ։ ) " Եւ դու առ քեզ ցորեան , և գարի , ոսպն , և ոլոռն , և կորեակ , և հաճար , և արկցես զայն յամանն մի խեցեղէն , և արասցես դու զայն քեզ հաց ։ և ըստ թուոյ աւուրցն զոր ննջիցես դու 'ի կողմն քո , հարիւր և իններսուն օր կերիցես զայն ։ Եւ զկերակուրն քո կերիջիր կշռով ։ քսան սիկղ յաւուր , ժամէ 'ի ժամ կերիջիր անտի ։ Եւ ջուր չափով արբջիր , զվեցերորդ մասն դորակի միոյ՝ ժամէ 'ի ժամ արբջիր ,, ։ Յայս բովանդակին բարոյական վարդապետութիւնք Աւետարանին Քրիստոսի ։ որ նախ ։ " Եւ պահեալ զքառասուն տիւ և զքա-

ռասուն գիշեր՝ ապա քաղցեաւ ,, . ( Մտթ. Դ . 2 ) : Որով և յաղթեաց փորձողին . և դարձեալ ասէ . ( Ղուկ . իա. 34 . ) ,, Զգոյշ լերուք անձանց՝, գուցէ ծանրանայցեն սիրտք ձեր շուայտութեամբ և արբեցութեամբ՝ և հոգւովք աշխարհականօք ,, : Եւ առ 'ի Ճնշել զմարմին , մեր՝ ասէ . ( Մրկ . Ը . 34 . ) ,, Եթէ ոք կամի գալ զկնի իմ՝ ուրասցի զանձն իւր , և բարձցէ զխաչ իւր , և եկեսցէ զկնի իմ ,, : Այսու բառնայ Քրիստոս 'ի սրտից մերոց զիղձ անձնասիրութեանն , որ է պատճառ ամենայն մեղաց , ըստ այնմ . ,, Անձնասիրութիւնն է սկիզբն մեղաց ամենայնի ,, . ( Սիրաք . Ժ . 15 ) : Վասն որոյ և առաքեալն ասէ . ( Գաղ . Ե . 24 . ) ,, Իսկ որ Քրիստոսեանքն , զմարմինս իւրեանց 'ի խաչ հանին կարեօքն և ցանկութեամբք հանդերձ ,, :

,, Քննեցէք զդիրս , զի դուք համարիք նոքօք ունել զկեանս յաւիտենականս ., . ( Յովհ . Ե . 39 ) :

,, Ամենայն գիրք աստուածաշունչք և օգտակարք , 'ի վարդապետութիւն են՝ և ի յանդիմանութիւն , և յուղղութիւն , և 'ի խրատ արդարութեան , զի կատարեալ լցէ մարդն Աստուծոյ , յամենայն գործս բարութեան հաստա-



տեալ ,, . ( Բ . Տիմ . Դ . 16 . 17 ) :

,, Ամէն ամէն ասեմ ձեզ , մինչև անցցեն երկինք և երկիր , յոտ մի՝ որ նշանախէց մի է , ոչ անցցէ յօրէնացն և 'ի մարգարէից , մինչև ամենայն եղիցի ,, : ( Մտթ . Ե . 18 ) :